ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/176

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.11.2018թ. թիվ 26-3/21403-18 գրությամբ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.11.2018թ. գրության հիման վրա, 23.11.2018թ. «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն 16.11.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծարել է 17.07.2018թ. կնքված թիվ ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը: Պայմանագրի կողմը հանդիսանում է «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ն, որը էականորեն խախտել է պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետները և մինչև այժմ չի մատուցել պայմանագրով ստանձնած ծառայությունները:»:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն համայնքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 23.11.2018թ. գրությամբ դիմել է «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.11.2018թ. թիվ 26-3/21403-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. ՍՑ-ԷՍ-2018/176 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 23.11.2018թ. թիվ 26-3/21403-18 գրությունը, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի 16.11.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի միջև 17.07.2018թ. կնքված N ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի կողմից 15.11.2018թ. «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին ուղղված գրությունը.

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի միջև 17.07.2018թ. կնքվել է N ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ատանձնում է ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով :
- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը էականորեն խախտել է համարվում, եթե

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

- 7.11 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածով ծառայությունների մատուցման ժամկետ սահմանվել է՝ Պայմանագրի կնքման պահից մինչև երկու ամսվա ընթացում:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն 15.11.2018թ. գրությամբ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Կատարող) միջև 17.07.2018թ. կնքվել է ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պետական թիվ ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով նախատեսված՝ Կատարողի պարտավորությունները մանրամասն նկարագրված են Պայմանագրի անբաժանանելի և բաղկացուցիչ մասը կազմող՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածով:

Կատարող ընկերության կողմից թույլ է տրվել Պայմանագրի կատարման էական խախտում, որը հիմք է հանդիսանում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Մասնավորապես՝

1. «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետները խախտել է, և մինչ այժմ չի մատուցել թիվ 1 հավելվածով սահմանված ծառայությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3-րդ կետի բ) ենթակետը, ծանուցում ենք Ձեզ այն մասին, որ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն 2018 թվականի նոյեմբերի 15-ից միակողմանի լուծում է ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի միջև կնքված

17.07.2018թ. թիվ ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր մասնաշենքի ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 5.3-րդ կետը՝ տեղեկացնում ենք, որ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ից կգանձվի տուգանք՝ 12.760 ՀՀ դրամ և տուժանք՝ 44.000 ՀՀ դրամ:»:

Միաժամանակ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն N ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 22.11.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի միջև 17.07.2018թ. կնքվել է N ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման պայմանագիր:

- N ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածով ծառայությունների մատուցման ժամկետ սահմանվել է՝ Պայմանագրի կնքման պահից մինչև երկու ամսվա ընթացում:

- «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում Պայմանագրով նախատեսված ծառայությունը չի իրականացվել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ն, Պայմանագրով նախատեսված ծառայությունը սահմանված ժամկետներում չկատարելովելով՝ խախտել է 17.07.2018թ. կնքված N ՆՀԿ-ԳՀԾՁԲ-18/5 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.11.2018թ. թիվ 26-3/21403-18 գրությամբ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**